

ՎԼԵՅ. Սուլթանէն, ի Կեսարիա զերենք ապահով
տեղ մը զետեղեց, ուր իբր երեք տարի մնացին:

Այսպէս ուրեմն կրցան թշնամիք իրենց
յաջողութեան վրայ անդամ՝ մը պարծիլ. բայց
շատ կարճատեւ էր այս պարծանքը: Կաղզազ՝ իւր
խղճէն գրգեալ՝ սկսաւ թշուառ ու տառապեալ
Տիւղեան գերդաստանին եւ արքորեալներուն մեծ
մարդասիրութիւն ցուցնել. բայց ինքն ալ ՎԼԵՅ.
Սուլթանի հրամանաւ՝ որ իւր սիրելիներուն գլուխն
եկող անցից ներքին պատճառներուն շատ ուշ
տեղեակ եղաւ, 1820 Սեպտեմբերին, փողերա-
նոցի այնչափ տենչացեալ պաշտօնէն հանուեցաւ
եւ Ղեմնոս արքորուեցաւ. իւր տեղն անցաւ Պի-
լէղիքճեան Պօղոս: Իսկ միւս թշնամիք չկրցան
ՎԼԵՅ. Սուլթանին արդար վռէժինդրութենէն
խուսափիլ. ամէնքն ալ՝ ի փոխարէն այնչափ անի-
րաւ սադրանաց, իրենց գլուխը տուին ի քաւու-
թիւն:

Ընթերցողն ինքնին կրնայ գուշակել Տիւ-
ղեանց ողբալի վիճակը. երջանկութեան գագա-
թէն յանկարծ թշուառութեան խորքն իջնել...:
Այս վիճակին ծանրութիւնն՝ միայն անձամբ փոր-
ձելու զժբախտութիւնն ունեցողները կրնան իմա-
նալ: Ծառայից եւ աղախնաց տեղ՝ ցաւ ու տա-
ռապանք. սիրեցեալ եղբարց ջերմեակ ընկերա-
կցութեան տեղ՝ ամայութիւն եւ արքորք: Նա-
խախնամութեան ձեռքը կարգադրած էր ուրեմն,
որ Տիւղեանք թշուառութեան դառն բաժակին
մինչեւ մրուրը քամեն:

Բայց եղածը մոռնալ՝ տառապելոց ամե-